


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHAEOLOGUE

(EGYPTE) LE CAIRE

Գրքերի և թղթերի վաճառքի գրասենյակ



ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմը 30

ԱՐՏԱՍՏԱՆ

Տարեկան գրանց 10

Գրասենյակը գտնվում է Կայսերական փողոցի 14 համարի վրա:

Ձի հրատարակումը անապահով է
ևս չե՛նք տրույր:

ԱՐՁԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ԱՐՁԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՄԻՈՒԹԵԱՆ

Թի ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՔԻՆՍԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆ ԿԱՄԱՐ
ԿԵՖԻ ԵՒ ՂԻՍՏԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆ ԿԱՄԱՐԻ
ՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԿԱՐԿԱՐԻՆ, ՈՐ Կ՝

ԳՐԱԿԱՆ ՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յոգում ապահովելու և արդարացի պատասխանատվություն կրելու համար

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂԱ

ԱՂԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ

Հայուն սեւորակ ճակատագրերը
գարեբէի ի վեր դրած է զայն այն-
պիսի հասանքներու առջև, որոնք
- հոսանքները - հեշտիւ յաջողած են
խել իրմէն մեծ պատու մը,
հատուած մը կամ աւելի կարեւոր
մաս մը, և հետզհետէ ճշգրտոր զի-
ճակի մը մասնել սղգուծիւնը:

Եսա հեռանքներ երթալու և
հայ կեանքի պատմութեան խորա-
խոր և արեւմտի հատուածները պր-
պրտելու և ուսումնասիրելու հարկ
չկայ հաստատելու համար թէ՛
ի՞նչպէս և ի՞նչ անուղիղ ճամբանե-
րով հայութիւնը իր անդրազնութենէն
կարեւոր թիւեր զո՛հ տուած է «յա-
ւաճիկմական» և այլ վարպետորդի
բերաններու գրամագլուխը կազմող
չլացուցիչ բառերու կառուցումը:

Բանի մը տասնեակ միլիոններ
ու պատկառելի թիւը ներկայացը-
նող հայութիւնը այդ հոսանքներէն
հետզհետէ տարուելով, այսօրուան
հազիւ ինն 3-4 միլիոնի նուազագոյն
թիւին յանգած է. թիւ մը՝ որ հա-
յու նման հպատակ և աստանդա-
կան ազգի մը համար երբէք միտի
թարական և ներկայանալի չէ:

Հոս է որ գիւրաւ կարելի է
գուշակել թէ՛ ի՞նչ դժբաղդ ճակա-
տագիրներ մը կան են զինքը այդ ըս-
պաւսպուս կործանման վիճակին:

Ինչ մտաբանելու աստիճան հին
չէ Լեհաստանի 40 հազարեակ մը
հայութեան «ձուլումը», նիկող չե-
պիսկոպոսի մը քմայքներուն զո՛հ
և անոնցմէ այսօր հայութեան ամե-
նափոքրիկ նշող մը, հետք մը ան-
գամ նշմարել կարելի չէ. Իսկ պատ-
մութեան մէջ այս ու ասոր նման
շատ մը արարաւիթ արձանագրու-
թիւններ գրեթէ ամեն վայրկեան՝
ամէն թիվատու մի աչքի տուչ և ու-
նենալով հանդերձ, հայութիւնը
տակաւին պէտք եղած խոհմու-
թիւնը և զգուշութիւնը ի գործ չը
գնեք գառան մորթով իր մէջ սղր-
գամ մարդախոշոշ դայկերուն կեր
չ'լինելու համար...

Տառապանալ ու չտրոջկուած ազգ
մը - ինչպէս է հայը - բնականաբար
զիւրուածմամբ կը հմայուի կամուրջի
յուսատու լուսորձակումներէն ան-
գամ, որոնք ազատութեան և յառաջ-
դիմութեան անունին տակ գրուած
ցոյց կը տրուին իրեն: Կատարի ծո-

վի մը անհրաժեշտ ու իրենց
խաղաղիկ դարձած հողի մը իր մա-
համբո՛ր ճիգերուն մէջ առաջին ան-
գամ ձեռքին հանդիպող խորտակ-
ուած ըստափայտի մէկ աննշան կը-
տորէն անգամ փրկութիւնը ձեռք
բերել կը յուսայ. բայց աւա՛ղ, վա-
ղանցուկ երազ մը կ'ըլլայ ատիկայ
իրեն համար. զինքը տանջող և իրեն
կեանքին հետ խաղացող փոքրիկ ու
մոռնող ալիքներուն կը յաջորդէ ա-
հեղորէն լեռնայած և փրկորդէզ կո-
հակմը, ու զինք իր ազատութեան
միտիթարութիւնը բերող փոքրիկ լա-
տափայտի կտորին հետ կը զրկէ ծո-
վին յատակը, այլ ևս լոյս ու արև
չ'տեսնելու համար յաւիտենապէս:

Գրեթէ նմանօրինակ փոքրիկ
կանցիկ հիմայ հայ ազգին «դոյու-
թեան» ճակատագիրը, որ սե մրու-
րով գրուած է եղբր:

Եթէ քեզ մը, բայց քեզ մը
հետաքրքիր աչքով դիտենք զմեզ
չը՛պապատող հարիւրակներով հերձ-
ուածները, որոնք մօտաւոր անցեա-
լի մը մէջ ծնունդ առած են մեր ազ-
գին մէջ, ու այս կամ այն անունով
ու ծրագրով կը գործեն, շուտով
պիտի համոզուինք թէ՛ ատոնք փո-
խանակ մեր ցանկացած ազատու-
թիւնն ու ընտրութիւնը մեզի բե-
րելու, ընդհակառակը մեզի կա-
ռաւորութեան դէպի այն տեսակ խո-
րափոխներ, ուրիշ դուրս գալ այլ
ևս անհնար պիտի ըլլայ առ յաւէս
Ազանդամութիւնն է ասիկայ:

Գոնէ մեր այս ազգային ճգը-
նաժամային վիճակը ստեղծողները,
իրենց սպառիչ գործելակերպը սի-
րելի և շլացուցիչ անուններու, և
նոյնպիսի սպեորիչ և խանդավառող
բառերու տակ չ'պարսձած կէտն...

Մեզի վերապահուած տարօրի-
նակ զժողովրդութիւնները, զարգա-
ցումի պակասը, զայն ձեռք բերե-
լու անկարելիութիւնները շափա-
զանց դիրարհաւան ազգ մը ըրած են
մեզի...

Ամենէն անհեթեթ զաղափար-
ները, ամենէն դժուար իրադար-
ձելի հեռագրակները շուտով
կ'իրացնենք «յառաջդիմութիւն է»
մտածելով, մինչդեռ այդպէսով
հայութեան իսպառ անհետացումին
խորտորտան է որ կը պեղենք մեր
իսկ ձեռքերով, և անոր դարաւոր
գոյութեանը վտանգ կ'սպառնանք:

Բաւորք և աւելի դարէ մը ի

վեր ազգային ազատութեան հաշտոյն
մեր ընդգրկած քաղաքականութիւ-
նը, այսօր անհամեմատ փոփոխու-
թիւններու ենթարկուած, այլասե-
րած, եթեզգիւնան համայնակու-
հեղրայի մը ձեւին վերածուած է,
ամբողջ հայութիւնը կուլ տալու
պատրաստ, ու մենք դեռ կ'երա-
զենք...

Մեր կուսակցութիւնները իրենց
նուիրական կոչումը բոլորովին մոռ-
նալով, եսամոլութեան կործանիչ
ախտէն վարակուած՝ իրար հալածե-
լու, զիրար ջնջելու հետամուտ են,
շատ անգամ ամենէն անապիւր-
ջիցները ի գործ դնելով:

Ազանդամութիւնը՝ աւելի ա-
նոնց մէջ է դարձել որ երեւան կու-
գայ, և պահ մը եթէ ճնշող ուժի մը
չնորհիւ կըրցած էին ծածկել իրենց
բուն գոյները և թաքուն նպատակ-
ները, այսօր աներկիւղ ցուցադրե-
լու քաջութիւնն ալ ունին...

Ազգը փրկելու անունին տակ,
այդ միևնոյն ազգը ու անոր գոյու-
թիւնը դարերու խոշտանգումներէն
պահպանած եկեղեցին՝ քար ու քանդ
ընելու ետէէ են: Ըն ատիկայ՝ ալ
«ներքին միտք» ըլլալէ դադարած է:

Հիմայ չենք կրնար նոյն իսկ
պարծենալ թէ՛ մեր եկեղեցիին պաշտ-
պանութիւնը ստանձնող պաշտօնեա-
ներուն, կղերականներուն, մէկ մե-
ծագոյն մասը - իսկապէս վարձկան-
ներ - ծախիչ հոսանքին առջև չեն
գտնուիր, ու այսպէս վտանգը բո-
լորովին անխուսափելի դարձնել:

Ազատութիւն բերինք ըսին մե-
զի, ու ազատութեան տակաւին ա-
մենէն աննշան մէկ բարիքը անգամ
չ'վայելած, այդ մեզի բերուած ազա-
տութեան գէնքերով մեր ազգին պա-
հապան հրեշտակը - եկեղեցին - ըս-
պանանել կուզեն, ի վնաս մեր ազգին
ամբողջութեան:

Այս սողերը դրելու ատեն ան-
շուշտ չենք կրնար խզճի հանդար-
տութեամբ ըսել թէ՛ մեր եկեղեցին
ժամանակի պահանջմանց համաձայ-
նեցնելու պէտքը չունի. բայց այս
բանը ընելու համար փոխանակ «ա-
զանդամութեան» զիբը նետուե-
լու, եկեղեցին գրեթէ ուրանալու,
մենք պէտք ունինք սպասել և ժա-
մանակի թոյլտուութիւններ ձեռք
բերել դէպի այդ նպատակը հաստա-
տուն և օրինաւոր քայլեր ընելու հա-
մար:

Այս սողերը մեր ազանդամը

ներէն բնականաբար յետադիմա-
կան, յորջորջումի արժանանան.
բայց ինչո՞վ կարելի է հաստատել
թէ՛ իրենց արդի ընդգրկած ուղղու-
թիւնը մեր ազգին համար աղիտարե-
ր և յետադիմական չէ...

Ազգի վիճարանութեան տեղ
անապիւր պայքար մ'է որ կը շարու-
նակուի յանուն յառաջդիմութեան.
Փոխանակ զերար հասկնալով, զիրար
համոզելով փրկութեան որոշ հան-
գրուան մը ստեղծելու, գաղա-
փարի և համագմանց վրայ բիրտ ճըն-
շումներ ի գործ կը դրուին զանա-
զան պտտած ձեւերու տակ...

Այսօր ազգը կործանումի վիճին
բերանը հասած է, հակառակ ծա-
նուցումը ազատութեան, ու մենք
փոխանակ անոր իրական փրկութեա-
նը վրայ մտածելու, բաժանումի,
հատուածակնութեան և ազանդա-
մալութեան ոգին կը ներշնչենք անոր
ամէն բան մուրցած՝ յարձակելով
նոյն իսկ անոր նուիրականութիւննե-
րուն վրայ. - Եկեղեցին - կ'ակնար-
կուի:

Թիջիլի հրատարակուող «Հովիւ»
Շարաթաթեթթթ, որ անշուշտ մեր
ազանդամութեան և յետադիմական
ալ պիտի յորջորջուի, այս մասին
հետեւալ թելադրական հատուածը
կը սպորունակէ:

Ազատագրական հեղեղը լոյս
ձգեց մեր մէջ և՛ հայոց եկեղեցին
կործանելու միտքը՝ բարեփոխու-
թեան անունով վարագրուած:

Ա՞՞վ կարող է դէմ լինել բարե-
փոխութեան, ո՞՞վ չի կամենալ, որ
բարեկարգութի մեր եկեղեցին, պայ-
ծաւանայ, ո՞՞վ դէմ կը լինի, եթէ
Պատրիարքներ, Եպիսկոպոսներ, Ա-
ռաւորացիներ և բոլոր հոգևորակա-
նութիւնը կաթողիկոսի ձեռնբեցու-
թեամբ ժողովի կոչուին և ձեռնհաս
եկեղեցական և կանոնական օրէնք-
ներ ի հմուտ և փորձ աշխարհական-
ների խորհրդակցութեամբ անհրա-
ժեշտ բարեփոխութիւնները որոշուի
և այդ ժողովի որոշումն ի կատար
ածուի տուանց պիտուի, առանց
փողոցի...

Հաւազոյն ճամբան է ասիկայ
որ ցոյց կը տրուի. բայց մեր աղան-
դաւորները պիտի ուղեւն և պիտի ըս-
պասեն որ մինչև այդ երջանիկ օրը
քիչ մը մեր ազգը խաղաղ և ազա-
տութիւն չ'չէ... սա՛ իրենց մեզի
բերած ազատութեանն՝ որուն ուժով
մեր աչքերը փորել կուզեն հիմայ...

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

Ն Ա Մ Ա Վ Ա Տ Ո Ւ Փ

Թիֆլիս .- Խմբ Հայիսի .- Եա-
բաթաթերթիա Գրք . տարի թիւ
ճին մէջ հետեւեալ հայտածը կար-
գացինք .

« Անշուշտ այդ բնատիպ , նոր-
հայութիւնը բնորոշող աննշուշտ ըս-
տացուելիք միջոցները կը ծախսու-
ին նոյնպէս աւերման... ոչ ուզում
եմ ասել - ազատագրական գործը
յառաջ տանելու վրայ՝ Վանից էլ
գէնը , մինչև Սասուն , մինչև Տաւ-
րոսի բարձունքը , արգելաբաններ
չնչմամբ և նախագծով , մինչև որ
Հայաստան տշխարհում Հայութիւնը
իսպառ անհետանայ . »

« Արտասու՛մ եմ Ձեզ , հայ ե-
րիտասարդներ , հայ մարդիկ , ախոս
ձեր ընտիր , սիրտ թնդացնող զգա-
ցութենքուն , ձեր եռմեղին . դուք
որ տեղից իմանաք , որ Հայոց մէջ
էլ - ուրիշ կերպ լինել չի կարե-
լի՛ էր - արգելաբանը ոչ միայն գոր-
ծում է , այլ նոյն հասակն ունի ,
ինչ որ ունի յեղափոխութիւնը , դեռ
մի քիչ էլ աւելի . »

« Որ իմանաք քանի՛ արգելիկ-
ներ գործում են մեր մէջ , լուսազ-
րում և պատիւ և փառք վայելում ,
և դրանք մեր գործերի , մեր հաս-
տատութիւնների վերաբերեալ աւե-
լի տեղեակ են , քան մեր յայտնի
գործիչները . »

« Ազգէկիները ՄՏԱՆ ԵՒ ՄԵՐ
ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷ՞՞ . »

Կը խնդրէինք « Հովիտ » Պատ.
Խմբագրութենէն , որպէսզի ՍՁԷՑ
կամ Ազգէկի բառերուն մեկնութեան
և բացատրութեանը համար քանի մը
տող յատկացնէր « Հովիտ » ի սիւ-
նակներուն մէջ , աւելի հասկնալի
ընելու համար ԱՁԷՑՈՒԹԵԱՆ ինչ ըլ-
լալը , որուն համար կանխաւ կը փու-
թանք յայտնել մեր շնորհակալիքը .

ՄԱՆՕՐՈՒԹԻՒՆ

« Յետագայ բողոքագիր չըջաբե-
կան գրութիւնը որ ամիսներ առաջ ըս-
տացած էինք ի հրատարակութիւն ,
նկատելով որ այն ատենները այդ մա-
սին ըլլալիք վիճարանութիւն մը ոչ
այնչափ ազատ՝ որչափ անպիտան զժու-
րութեանց կրնայ բաղիլ , յետագուե-
ցու հրատարակութիւնը : Բայց որով-
հետեւ հիմայ թուրքոյ շորս կողմը ա-
զատութիւն և ԱՆՂՈՐՈՒԹԻՒՆ կը
տիրէ , յարմար կը գտաուի հրատար-
ակել զայն , և վիճարանութեան նիւթ
ընել , բողոքող ազգայիններն ալ իրենց
իրաւունքներէն չզրկելու համար .
նՄԲ .

ԿՈՉ

ՈՒՂՂԵԱՆ ԴԱՇՆԱԿԱՎԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ
ԸՆԿԵՐՆԵՐ .

Մենք Լեւոնափայրի (երկիր) շրջանի Դաշնակցական ընկերներս ստանալով « Իրօշակ » ի Մայիսի հա- մարը , ամբողջովին նստաւոր ձ. Յ. Գ. Գրք. Ընդհանուր Ժողովի որոշ- շումներու տեղեկագրութեանը , ինչ- պէս նաև ստանալով նոյն Ընդհա- նուր Ժողովի արձանագրութիւնը , միանգամայն ստանալով զբաւոր և բերանացի մեր պատգամաւոր ընկեր Ե. ի զեկոյցումը , որով կը յայտնէր թէ իրեն իրեն մեր պատգամաւորը իրաւունք չէ տրուած Ընդհանուր

Ժողովին մէջ ձայն ունենալու , միւս կողմէն արձանագրութեան մէջ տես- նելով Լեւոնափայրի կողմէ ձայն նը- շանակուած , որը անշուշտ է՛ էր կըր- նար վաւերական եղած ըլլայ քանի որ մեր իսկական պատմաւորի ձայ- նը չէր այն , իւրաքանչիւրս ամենա- մեծ ուշագրութեամբ ուսումնասի- ըելով Ընդհ. Ժողովի ծանրակշիւ ու- ըրչումները որոնք բոլորովին նոր հոգի վրայ կը գնեն Դաշնակցութեան քաղաքական դաւանանքը և աշխար- հահայեացքը և իրեն հետևութիւն նաև կազմակերպութեան գործու- նէութիւնը , այս նպատակաւ դու- մարեալ Ժողովներու մեր վերջին նիստին մէջ հասանք հետևեալ եզ- ըրակացութեան և տարինք հետևեալ որոշումները .

Ա. - Կը բողոքենք մեր շրջանի ձայնը չընդունուելուն դէմ . քանի որ ինչ որ ալ ըլլայ մեր արդի ու- ժերուն կարևորութիւնը Լեւոնափայ- րի մէջ՝ համեմատութեամբ ուրիշ տեղերու յեղափոխական ուժե- ըու կազմակերպական կամ թուական կարևորութեանը , այնու ամենայ- նիւ իւր գործունէութեան խիստ կա- ընոր վայրի մը ձայնը պէտք է որ ունենար իր առաձին կշիռը և նշա- նակութիւնը . մանաւանդ այնպիսի Ընդհանուր Ժողովի մը մէջ որ Հ. Յ. Դաշնակցութեան ոգիին և ուղղու- թեանը մէջ այնքան հիմնական փո- փոխութիւնները կը ձգտէր մտցնել .

Բ. - Մենք հիմնուելով Դաշնակ- ցութիւնը անցեալին մէջ զեկալա- րող հիմնական սկզբունքներուն վը- ըրայ , որոնք իսկապէս պաշտօն են մեր երկրի և ընդհանուր Տաճկա- հայաստանի քաղաքական , սնտեսա- կան և ազգագրական արդի պայման- ներուն , ինչպէս նաև ընդունելով և պաշտպանելով հայկական առան- ձին հարցի մը գոյութիւնը Տաճկա- հայաստանի մէջ , իբր ազգայնական հայրենասիրական հարց , որու շուր- ջը բոլորուած և բոլորուելու էին հետզհետէ հայ Ժողովուրդին ամեն իւրեքը , առանց դասակարգային խտրութիւններու , որոնք անպայ- մանօրէն անհաշտ են մեր Ժողովուր- զի արդի կացութեանը , երբ հայ անունը կրող ամեն անհատ անխտիր ենթակայ է հալածանքի և անտա- նելի բռնաբարութեանց և երբ մեր ազգային գոյութիւնն իսկ յայտնա- պէս ի վտանգի է , բոլորովին տա- րորինակ կը գտնենք Հ. Յ. Դաշնակ- ցութեան ի պաշտօնէ , Սօցիալիստ կուսակցութեան մը վերածումը , և մեջազգային սօցիալիստական կող- մակերպութեան հետ կապուելը ու խառնուելը , և ինքզինքը հայ աշ- իատաւոր դասակարգի կուսակցու- թիւն յայտարարելով դասակարգային փնտասկար և ազգակործան խտրու- թիւններու սկիզբ գնելը հայ ժողու- վուրդի զանազան տարբերու միջև որոց շահերը թերևս հեռի են որո- շապէս իրարմէ տարբեր և իրարու հակառակ ըլլալէ . այլ ընդհակա- ռակը մի և անբաժան են , հաւա- ստարապէս վտանգուած ըլլալով բըռ- նակալ ըէժիմի և թիւրք կառավա- րութեան այլևս աշխարհածանօթ հայրիկնջ քաղաքականութեան ա- ռալ .

Մենք բողոքելով այս կէտը շօշա-

փող բոլոր որոշումներու դէմ , կը մնանք հատառապէս կառչած Հ. Յ. Դաշնակցութեան մինչև ցարդ ունե- ցած յեղափոխական ուղղութեան և դաւանանքին , մերժելով սիցիլիացիս յեղափոխականութիւնը առնուազն իւր կանխահաս և վտասակոր տաճ- կահայ Ժողովուրդի արդի կացու- թեանը և հանգամանքներուն հան- դէպ , և չենք կրնար համակերպել բնու կանխազգի մէջ մտցուած այն արտագրութեան թէ իւրաքանչիւր ոք որ կուզէ Հ. Յ. Դաշնակցու- թեան անգամակցիլ պէտք է ամբող- ջովին ընդունի կուսակցութեան ծը- րադիրը և տաքտիրը : Մենք չենք ծանրանար կովկասեան գործունէու- րեան նախագծի վրայ զոր գնահատել կամ քննադատել մեր ձեռնհասութե- նէն վեր է , բոտ որում մենք բաւա- կանալափ տեղեկակ չենք անդրկով- կասեան հայ կեանքի իրական պայ- մաններուն ու պահանջներուն : Բայց մենք խորապէս կը զարմանանք որ ինչպէս մեր կովկասեան եղբայրնե- րը և ընկերները նոյն համատու- թիւնը չեն ունեցած խոստովանելու իրենք ալ փոխադարձաբար թէ՛ չեն ճանչնար զէժիմի չափ մեր երկրի պահանջները և պայմանները . և օգտուելով , ինչպէս կ'երեւի . Ընդհա- նուր Ժողովին մասնակցող տաճկա- հայերու թուլութեան , անփորձա- ութեան կամ համակերպող տրա- մադրութիւններէն , ուզած են ի- ըրենց կարծեցեալ պահանջներուն վրայ չափել և՛ մեր պէտքերը և ըստ այնմ բոլորովին արտեստական և բռնազբօսիկ կերպով սօցիալիզմը պատուաւորել մեր կենաքի պոյման- ներուն հետ և այն ուղղութեամբ ալ , աւելի կամ նուազ չափով , փոխել տաճկահայ գործունէութեան ուղ- ղութիւնը :

(Մնացեալը յաջորդով)

ՏՊԱՐԲ ԵՊԵՏ

Միթ-կամրէն ծանօթ գեղա- գործ Մեծ . Տիար Գրիգոր Եֆ . Սա- րաֆեան , իրեն հարցէին շրկուած « Տիմուր Ժողով » գրքիչին փոխարէն 200 զրշ . ոչ զրկած է Ալլն . Սեդ- րաք Եֆ Գալիթեանի , որուն 100 զրշ ինք վճարած է , և 100 զրշն ալ իր գեղարտին բեկչիներէն Տօքթ . Փատըլ Եֆէտի :

ԴՐԱՄԱՇՈՐԹԱԿԱՆՔ

Մանգուրն կը գրէ .
Գանի օրէ որ հրապարակին վը- ըրայ զրոյց կը շրջի . թէ հայ յեղա- փոխական կուսակցութիւնները սկսած են դրամ պահանջել Պօլսոյ հրապա- րակին վրայ ծանօթ առևտրականնե- րէն .
Այս լուրերը աննպաստ տպա- լորութիւն գործած են հրապարա- կին վրայ և նոյն իսկ , կ'ըսեն թէ՛ Արշակ Եֆ . Գարակէօղեան մեկնեթ է Պօլսէն , այդ տեսակ պահանջիտո նամակ մը ստանալէ ետք , որուն մէջ սպանալիք ալ կայ եղբր .
Յայտնի է թէ նոր սահմանա- դրական երկիրներու մէջ միշտ տե- զի կ'ունենան այս տեսակ դէպքեր .

Կարգ մը բախտախնդիրներ , օգտը- ուելով առիթէն կամ շահագործե- լով իրենց պատկանած կամ չը պատ- կանած կուսակցութեան անունը , դրամ կը պահանջեն ալէն ձախէն և ինչ որ վրցնեն զայն շահ կը հա- մարին .

Մենք այսպէս կ'ուզենք մեկ- նել խնդիրը , քանի որ չենք ու- զեր հաւատալ թէ հայ յեղափոխա- կան - քաղաքական կուսակցութիւն- ները ձեռնարկած ըլլան սպանա- լիքով դրամ պահանջելու սովորու- թեան , որ հին բունապետական օ- ըրերու մնացորդներէն է և որ ատեն դուրս մինչև որոշ սահման մը ի- ըրաւունք ունենային , բայց հիմա , ազատ սահմանադրական շրջանի մը համար , այդ փորձերը պարզ դրա- մաշորութեան ուրիշ բան չեն կրնար համարուիլ .

Մենք երբէք չենք կրնար ար- գարտցնել ու է կուսակցութիւն որ պահանջող շեշտերով կ'ուզէ դրամ հաւաքել հասարակութենէն . Խա- զազ , ազատ կացութեան մը մէջ կուսակցութիւնները երբէք չեն կրն- նար ատանկ քաղաքականութեան մը հետեւիլ . Ոչ մէկ երկրի մէջ կու- սակցութիւնները ալէն ձախէն պա- տահալանութիւններէ կը սնանին . կուսակցութիւնները իրենց կազմա- կերպութիւնը ունին , իրենց ելև- մուտքը ճշտուած ու որոշուած կ'ըլ- լայ իրենց անգամներուն թիւին և անդամավճարներուն քանակին հա- մաձայն . Երբ բացառիկ պիտուէի մը պէտք ունենան , կրնան իրենց ան- դամներուն դիմել . կամ հրապարա- րակային կողմը ընել , որպէսզի հա- մակիրները օժանդակեն . Ասկից զատ ու է անհատ , բնական է , կրնայ նուէր մը ընել այսինչ կամ այնինչ կուսակցութեան , համակրելով անոր նպատակին կամ գործելու եղանա- կին . Ասկից դուրս , ճնշում ու պար- տաւորում ընել ոչ - կուսակցական անհատներու վրայ , սխալ է և ան- պաշտպանելի .

Ճիշտ այս տեսակէտով է որ մենք չենք կարծեր որ մեր կուսակ- ցութիւնները ատանկ ձեռնարկի մը հեղինակը եղած ըլլան . Ետտ շատ , կուսակցական անհատներ են որ կ'ուզեն առիթէն օգուտ քաղել . Եւ որպէսզի միանգամ ընդ միշտ պարզուի ճշմարտութիւնը , կը հրա- լիրենք մենք մեր կուսակցութեանց կեդրոնները՝ հրապարակաւ յայտա- ըարել թէ իրենք տեղեկութիւն ու- նին այս տեսակ բռնաբարիչ պա- հանջներու մասին , որոնց վերաբը- եալ զրոյցներ կը յամառին և իրա- կան հանգամանք մը առնել կը ձգ- անին . Անգամ մը որ կուսակցու- թեանց պատասխանատու մարմիննե- ըր այս յայտարարութիւնը բնն , անկից ետք , դիւրին է անմիջապէս ձերբակալել տալ ամէն անոնք որ կարմիր կնիքով մը կը ներկայանան թիւ մը դրամ շորթելու համար : Մենք կը յորդորենք ժողովուրդին որ Եթէ սպանալիքով դիմումներ ըլլան , ան- վախ ու բացարձակ կերպով մերժեն , վտարեն դիմողները , սա ապահովու- թիւնը ունենալով թէ ատանկ դիւրին սպանալիք ընողները իրենք է որ ամենէն շատ վախկոտ կ'ըլլան և սպանալիքով մը առջև ամէնէն առաջ անոնք է որ կը փախչին , առանց հետևին այնչու .

ՏԵՂԱԿԱՆ
ԼՈՒՐԵՐ

ԿԱՌԱՎԱՐՉԱՍԱՆ ՄԷՋ

Ինչպէս գիտենք, Գահիրէի Կառավարիչ Վսեմ. Մահմուտ բաշա Ստեփանեան, նոր Կառավարիչ անուանուած էր, Վսեմ. Իպրահիմ բաշա Նէկիպ :

Սեպտեմբեր 23ի, Երեւանի թիւ 2, Վսեմ. Ստեփանեանը իր քով հրատարակելով Գահիրէի բոլոր օստիկանատանց քննիչներն ու տեսչները (Մամուր) հետեւեալ հրահանգները ստուած է :

« Պարտա՛յք Գահիրէի և Տեսչաներ՛ » :

« Անձանօթ չէ Ձեզի Գահիրէի բնակիչներուն մէջ տիրող անտապա՛նով վիճակը, որ հետեւանք է գողութեանց, ըմբոստութեանց և վերջերս եղած ապստամբութեանն » :

« Հաստատուած եմ որ անհրաժեշտ դարձած է Ձանքեր ընել, ժողովրդեան ապահովութիւնը ձեռք բերելու համար. ուստի կը հրաւիրեմ զՁեզ մասնաւոր հսկողութիւնի գործ դնել չարագործներու, վերապարտներու (սապրազայր) և դատարկագործներու նկատմամբ, և անոնց շարժումներուն և գումարմանց տեղեկուն ծանօթանալով ա. մեխախառն միջոցներ ձեռք առնել անոնց դէմ » :

« Այս ջանքերուն մէջ օգնեցէ՛ք իրարու, և ի հարկին Ձեր ստորագրեալներուն աջակցութեանը գիտեցէ՛ք, որպէսզի քաղաքին մէջ ապահովութիւն տիրէ » :

« Ուրեմն, կը պարտաւորեմ Ձեզ գիշեր թէ ցերեկ անցնել Ձեր հրակողութեան յանձնուած շրջանակներու ոստիկանատները, բոլոր անցքերուն անձամբ տեղեկանալու համար » :

« Մեծ յոյս ունիմ թէ իմ հրահանգներս Ձեր ուշադրութենէն չի պիտի վրիպին, և դուք չ'պիտի թերանաք Ձեր պարտականութեանց մէջ փափաքուած արդիւնքը ձեռք բերելու համար » :

Նորին Վսեմ. Ստեփանեան Կառավարչական այս հրահանգները արդարեւ ծախսահարսութեան արժանի են և կարելի չէ որոնալ թէ՛ Գահիրէի հսկողութիւնը աշաւորը վիճակի մէջ գրուելու կը կարօտէր . . . »

ԱՆՊՈՒՆՆԵՐ
ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ

Կը լսենք թէ՛ Արարկիրի նախկին և Ատանայի արդի Առաջնորդ Գեր. Տէր Մուշեղ կեպոսկ . Սերտեան Այգեքանդիթա ժամանած է՝ և քանի մը օրէն Գահիրէ ալ պիտի հանգիպի :

Ն. Գերապատուութեան այցելութեան նպատակն է եղեր Ատանայի մէջ Հիմնադրութեան Երկրագործական գիշերօթիկ վարժարանին համար, քանի մը հարիւր սակի տարեկան ծախքը ստորհալել, ու պէտք է որ ըլլայ տիկայ . . .

Կիլիկիոյ կողմերը նմանօրինակ հաստատութիւն մը ունենալ արդարեւ

րե կարեւոր է. Իսկ Մուշեղ կեպոսկի պատիւ այցելութիւնը հաւանական է որ արդիւնաւոր ըլլայ. սակայն ըստգնի կան թէ՛ այդ այցելութիւնը պէտք եղած պաշտօնական ձեւակերպութիւններէն անցած չէ, և նորին Գերապատուութիւնը լոկ մէկ քանի-ներու՝ որոնց « բարոյականին » վրայ լուրջ կերպով կատարած զննար ալ կան, թէ կարգաւորին անտալով է որ կեպոսկուս փութացած է :

Սա անսրբանալի է որ նիւթականի հետ կող ունեցող գործերու մէջ, կեպոսկուսը ամէնէն ձեռքը զննելը եղած է, և Կիլիկիոյ նման « ցանկալի » և բազմամարդ հայութիւն պարունակող տեղ մ'ալ կարժէ որ կեպոսկուսի հոշակուած անառաձեւեղութենէն օգտուելով կարենայ յուսալիքով :

Սակայն երբ այդպիսի առաջնորդ մը « Կիլիկիան նամակներ » ի հետեւի կ'ընէ Գոմրանի կողմէն կողմայ, այն ատեն կարժէ քիչ մը կատարելով վերաբերել թէ՛ անպատճառ « լուսնա մուսնա » բաներ մը կարելի է որ գառնայ, ինչպէս ուրիշ համանման պարագաներու մէջ տեղի ունեցան, ու ամէն սը գիտէ . . . »

« Կիլիկիան նամակներ » ի հետեւի կ'ընէ Գոմրանի, Եգիպտոսի հայութեան մեծագոյն մասին ծանօթ է արդէն իբրև ՄԱՏՆԻՉ, զեղծարար, անբարոյական, սրկայ, ոճրագործ, կաւատարար, բողաբած, խարդախ, դրամաշորթ, խոյտառակ, խարբեայ, աւաղակաբարոյ, սը եթէ կուզէք հրձիգ . . . և այլն ըստ կարգին . . . Այս կողմէն նկատելով խնդիրը՝ լուրջ կատարածներ կարելի է սնուցանել այդ գործակիցներուն նկատմամբ, հակառակ որ դրանք ինքնին պատուաւոր քաղաքացի » ալ անուանած ըլլան :

Գալով Ն. Գերապատուութեան Մուշեղ կեպոսկուսին, անոր ուղղամտութիւնը բնաւ կատարելի ներքեւ չի յնար, ու իր ձեռնարկը ամէն գովեստէ վեր կը մնայ, և հակառակ որ ինք զորդացած, բանիբուն, գործունեայ, եռանդուն և ամէն լուսագոյն և գնահատելի արժանիքները իր վրայ միտցուցած ըլլայ, գարձեալ մենք իր այս տեղի շփում ունենալիք շրջանակը ի նկատի ունենալով, պէտք կուրենանք կարգ մը . . . զգուշութիւններ պատուիրելու, որովհետեւ « մեծ ունայ » ըսած են թէ՛ « Բիւրի Մարտա սիւղեմիւրի, սահա չի յսիք քիչ ինչիւր . . . » կեպոսկուսի կիլիկի արեւին տակ եփելու է եղեր . . . »

ՉՈՒԼՈՒՄԻ ԵՐԿՐԷՆ
ԲՈՒՆԻ ԲՈՒՄԱՍՏՈՒՄ

Արարկիրի Առաջնորդական Տեսչական Գեր. Տէր Մեհարեան վարչական Այլաբարձուի Մարտ 2 թուականու հետեւեալ հեռագիրը զրկած է « Արեւելք » խմբագրութեան :

Խմբագրութիւն « Արեւելք » ի Շիփկի փափազեան Համբարձումին կիւր, Մարտի, ճամբան գտցած միջոցին Շէյխէրցի կարգ մը

ստորին և բռնապետութեան վարժուած թուրքեր բռնի իրենց տունը տանելով մէկ ու կէս ամիս վերջը Արարկիրի մէջ ժամագործ հոճայի մը տունը կը բերեն և բռնութիւն բանեցնելով կ'ստիպեն որ խեղճ կիւր իսլամութիւնը ընդունի այս դէպքը իմաց տրուելով գիտում եղաւ տեղական իշխանութեան մօտ և սակայն պատասխանուեցաւ թէ կիւր ո'չ Առաջնորդարանին և ո'չ ալ ամուսնին չի կրնար յանձնուիլ : Մեր իրաւունքներուն պաշտպանութիւնը կը խնդրենք փութով :

Առաջնորդական Տեսչական ՄԵՀՐՈՒԺԱՆ ՎԱՄԱՊԵՏ

« Արեւելք » իր կողմէ կ'աւելցնէ թէ՛ Այս հեռագրին պատճենները զրկուած են նաև վարչական և Օսմ. Խորհրդարանի նախագահին, (Մ. Խ. Ինչո՞ւ ո'չ ալ Պատրիարքարանին) սակայն չենք գիտեր թէ՛ այս անգամ ալ խորհրդական Ատիլ պէյ դարձեալ իր բարի սովորութեան համաձայն պիտի յայտարարէ՞ թէ՛ անկարելի է վերագործը հայ կնոջ, որ այժմ իսլամի մը տունը գտնուի . . . բռնի կերպով : Այս ամենուն վերջ մը տալու է. խորհրդական պէյ արդարութիւն և մանաւանդ կրօնի ազատութիւն ըսուած բան մը կայ : Երբ անցեալ օր բռնի կերպով իսլամացուած Մուշեղ կնոջ դէպքը երևան ելաւ ու խնդրոյ առարկայ եղաւ, խորհրդական պէյը պատասխանեց թէ՛ նիխան եղեր է անգամ մը և նիխան մը չի լուծուիր : Թո՛ղ թէ բռնի նիխանները կարելու ինչ պիտի ըսէ, երբ օրինաւորապէս պատկուած և ամուսին ունեցող կին մըն է որ կառուանդուի և զայն բռնի իտլամացնելու փորձեր կը ըլլան :

Ծանօթութիւն « Արաւոյս » ի Արարկիրի Առաջնորդական Տեսչականին ժողովրդեան իրաւունքները պաշտպանելու խնդրոյն մէջ ցոյց տուած և ուսնող ամէն գովեստից արժանի է. ու անոր գիտումը ըրած թերթին « Արեւելք » ըրած գիտողութիւնները նոյնչափ զնահատելի են :

Ստոյգ է որ գաւառներու մէջ, քովսի տեղեր, այդ կարգի անփոխարինելի զրկանքներ տեղի կուրենան օտարազգիներու կողմէ, որոնց առաջը առնելու համար ամեն ջանք եւ հոգածութիւն խնայուել չէ. բայց ինչ պիտի ըսեն արդեօք, Առաջնորդը, Արեւելքի խմբագիրները և ակնատես հայեր, որքազա քաղաքներու մէջ մանաւանդ՝ նըմանօրինակ դէպքեր տեղի կուրենան եւ այս անգամ ո'չ թէ թուրքերու՝ այլ հայերու կողմէ եւ Առաջնորդի եւ Առաջնորդարանի պաշտպանութեամբ :

Արդեօք այդպիսի դէպքերու մէջ ալ Օսմ. Խորհրդարանի նախագահ Ա. մէտ Րիզային դիմելու է, ինչպէս ըրած է Արարկիրի Գեր. Առաջնորդը : « Արեւելք » իրեն արդէն ծանօթ կարգ մը նմանօրինակ դէպքերու մասին րոտրովին լուսութեամբ կ'անցնի, եւ իր ուղղամտութիւնը կատարելի ներքեւ կը զնէ . . . »

Ուրիշ զոյրում. Արարկիրէն ստացուած նամակներէ կը տեղեկանանք թէ՛ տեղւոյն նամակատան Տնօրէնը, որ շատ հին աղուեաներէ մէկն է, արտասահման

զրկուելու համար իրեն յանձնուած նամակները վաւարանը կը նետէ եղեր իսկ նամակագրոյն համար առած ստակը գրպանը : Ստեպ կը պատահի որ գաւառացիներ կը գանգատին թէ՛ երկար ատեն է նամակ չ'են ստանար, մինչդեռ գաղտնիքը շատ պարզ է եղեր. « նամակը վաւարանը՝ և գրամը գրպանը . . . » ապէ գիտին ինչ կուզէք . . . »

ԳՐԱԿՆՆՈՒԹԻՒՆ

Եղիպտոս ալ տրամադրութիւններ ցոյց կուտայ Պօլիսի հետեւելու : Եղիպտոս թերթերը կը գրեն թէ՛ Նախարարաց խորհուրդը իր վերջին նիստին մէջ 1881ին պատրաստուած Մամուր օրէնքը թիփու սրբագրութեամբ մը գործադրութեան գնել կուզէ հաւասարապէս տեղական եւ օտարազգայաններու վերայ ալ :

ՄԻՆԵՄԱԹՕԿՐԱՖ
ՎԵՆԻՒՍ

Տէր ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԵՂ ԿԱՍՏԵԱՆ
Պուրազի նախկինսան զինաց քրանիկի
գծին վրայ
ՆՈՒ ԲՐՕԿՐԱՍ

ՉԻԱԴԱՐՄԱՆ

Հայ ձիադարման և պալատար մը պատրաստ է որ ի հարկին տունի կառք ալ կրնայ վարել : Հարկ եւ զած ծանօթութիւնները նստանալու համար « Արաւոյս » ի տպարանը գիտեմէ : Հաւատարմութիւնը երաշխաւորեալ է :

ՆԱԽԱԳԻԾ ԿԱՆՈՒՆԻ
ԵՐՈՒԱՆԵՂԻ Մ. ՅԱՎՈՎԵԱՆԵՅ ՎԱՆՈՒՅ
ՄԻՍԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՏԻՆ

Հիմնական Սկզբունք

(Շար. նախորդ թիւէն)
14. Միտարանական Բնդհ. Ժողովը կը կողմէ նաև կրթական պաշտօնեութեան համար եռապատիկ ցանկ և կը ներկայացնէ Ազգ. կեդր. վարչութեան Ուսումնական Խորհրդին :

15. Միտարանական Բնդհ. Ժողովը պատասխանատուութեանց և ընտրութեանց հարցերում պարտաւորուած է զազանի քուէարկութեամբ որոշումներ տալ և ընտրութիւններ կատարել կամ թեկնածուներ ներկայացնել :

16. Միտարանութեան մէջ մի անգամ իր ստացած պարտականութեանց համար պարբերաբար համարատու և պատասխանատու է Միտարանական Բնդհ. Ժողովի առաջ :

17. Մատակարարութեան և կրթական մարմինները և թէ և անմիջապէս պատասխանատու են Ազգ. կեդր. վարչութեան վանդակից և Ուսումնական, Տնտեսական Խորհուրդներուն, բայց Միտարանական Բնդհ. Ժողովը անմիջական ակնատես հսկիչը լինելով անոնց պաշտօնավարութեանց, իրաւունք ունի բացատրութիւն պահանջել և ի հարկին ստացուցեալ պատճառաբանեալ ամբաստանութիւն ներկայացնել կեդր. վարչութեան պատկանեալ խորհուրդներուն :

ՄԵԾ ՎԱՃԱՌՆՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԸ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՔԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅՍՏԿԱՆԵՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աճան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամախճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաբարձր թէմպէրի ալ և ալ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէն ներքով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՔԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

18 Յամենայն դէպս Միաբանութեան մէջ մի անդամի անդարտամահաշուի թեան, զեղծման, միաբանական կոչման անարժանութեան ամբաստանութիւնները Միաբանութեան Ընդհ. Ժողովէն Ազգ. Կեդր. Վարչութեան պատկանեալ մարմիններուն ներկայացուելէ վերջ, Կեդր. Վարչութեան Խառն Ժողովի, տեղեկագրով կը ներկայացուին Ազգ. Կեդր. Երեսփ. Ընդհ. Ժողովին որ միակ ձեռննոս մարմինն է առաջադրուած պատմիները հաստատող կամ միաբանութենէ արտաքսելու վերջնական վճիռ տուող .

19. Միաբանութեան մէջ մի անդամի համար հանդէպ Ընդհ. Ժողովի նախաքննիչ մարմինն է Կեդր. Ազգ. Վարչութեան Խառն Ժողովը .

20. Միաբանութեան ու է անդամի վանքին թէ ուխտաւեղեաց մէջ իր ստանձնած ու վարած պաշտօնի վերաբերեալ հարցերու քննութեան մէջ իբր բացատրող, պաշտպանող կամ հերքող միայն կըրնայ մասնակցել պատկանեալ մարմին կամ Ժողովի նիստերուն, և որոշող ձայն չ'կրնար ունենալ .

21. Միաբանութեան ու է անդամ իր ստանձնած կամ վարած պաշտօնի բերմամբ համարատուութեան, պատասխանատուութեան կամ ամբաստանութեան քննութեանց առթիւ չէ կարող մասնակցիլ հարցը քննող մարմին կամ Ժողովի խորհրդակցութիւններուն .

22. Պատրիարքի ամբաստանութեան պայմանը բացառութիւն կազմելով՝ նախապէս ամէն ժամանակ Վաչ. Սահմ. 18, 19րդ յօդուածներով .

23. Միաբանական Ընդհ. Ժողովի մէջ մի անգամ անհատապէս, անդամաց ամբողջութիւնը հաւաքաբար կը պարտադրուի անշահախնդրաբար հոգ տանել և հսկել Տնօրինական Ս. Տեղեաց և ալ ուխտաւեղեաց պայծառութեանը, ու ազգային սեփականութեանց և արտօնութեանց սեկորուտ պահպանման ու զարգացման .

24. Միաբանական Ընդհ. Ժողովի անդամներէն ըստ կրօնական աստիճանի, մինչև որ հրաժարում, արտաքուստ, մահ չը պատահի, փոխարինելու համար սոյն կանոնագրով որոշուած ընտրութեանց պայմաններով ընտրուած էն դուրս, ոչ ոքի եկեղեցական աստիճանը բարձ-

րացնելու առաջարկ չէ կարելի ընել, և ոչ ոք չէ կարող ձեռնադրել .

25. Միաբանական Ընդհ. Ժողովին մէջ առանց եկեղեցական աստիճանի խտրութեան մէջ մի անգամ հաւասար ձայնի իրաւունք ունի .

26. Առանց անդամաց Ընդհ. Ժողովի կէսէն մէկ աւելի, առ նուազ 42 անդամի և Ազգ. Ընդհ. Ժողովի ներկայացուցիչ ներկայութեան, միաբանական Ընդհ. Ժողովի նիստերն ու որոշումները վաւերական չեն կարող լինել .

27. Առանց արձանագրութեան և ներկայութեան ստորագրութեան, առանց որոշումների պատճառաւորութեանց ու մեծամասնութեամբ կամ միաձայնութեամբ տրուած լինելու յիշատակութեան, ոչ մի որոշում վաւերական և գործադրելի չէ .

28. Մատակարար մարմիններ կայացնելիք նախագիծը հիմք ընդունելով, միաբանական Ընդհ. Ժողովը կը կազմէ Ընդհ. պիւտժէն և կը ներկայացնէ պատկանեալ մարմիններու միջոցով Ազգ. Կեդր. Ընդհ. Ժողովի վաւերացման .

Մասնախառնութիւն

29. Երուսաղէմի Ս. Յակոբայ վանոց և ուխտաւեղեաց մատակարարութիւնը կը կատարուի բացառապէս և մի միայն մատակարար մարմին միջոցաւ .

30. Մատակարար մարմինը կ'ընտրուի միաբանական Ընդհ. Ժողովէն կազմուելիք եռապատիկ ընտրելեաց ցանկի վրայ Ազգ. Կեդր. Վարչութեան վանքից խորհուրդի կողմանէ .

31. Եռապատիկ ցանկը վանքից խորհուրդին կը ներկայացուի Կեդր. Վարչ. Խառն Ժողովի միջոցաւ, որ իրաւունք ունի իր դիտողութիւնները ու պատճառաբանեալ առարկութիւնները ընելու ընտրելեաց նկատմամբ . Մատակարար Մարմնոյ անդամ մը չ'կրնար Ընդհ. Ժողովոյ ատենապետ լինել .

32. Մատակարար մարմին ժողովներուն ևս կը նախագահէ Պատրիարքը կամ տեղակալը, որի նիստերուն անպայման կը մասնակցի Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովի ներկայացուցիչը .

(Շարունակելի)

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՑ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պատարի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից
Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԵՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Այխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրներն են և ասոնցով մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է .


400 և աւելի վիպակներ և մեքենաներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ՄԵՆԵՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Ա. Ա. Ս. ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերակամ արուեստահանդիսի մէջ ասացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿՍԸ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ՆՅԻՎԱՆԱՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկէրի յառիակը շինելու .



ԴԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Զրի դասեր և նորոգութիւններ, Մինկէր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւներու և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՒՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Այն հոգ մի՛ ընէք թէ ձեր կարի մեքենաները Շաշեալի մը գլխուն վրայ գրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար .

Պ. Սարգիս Թաշեան իրեն զիմոյ շատ մը յաճախորդներէն քաջաբերուած ատենէ մը ի վեր իր պաշտօնը թողլով, յատուկ կառք պատրաստած է և իր շրջուն ու շարժական խանութը «Վարձ» ին (անոր պատիկ ձեռն անունն է) բարձած ամէն թողէ կանցնի ամէն օր և ամէն ժամ .

Զինքը ճանաչուող զուարթութիւն չկայ . Պատիկ ձեռք մը քաջած կառքին վրայ երբ մեքենաներու գործիքներ տեսնէք, որուն շուրջ կողմը ամէն ինչուով գրուած է, մասնաւորապէս Réparation des Machines, անմիջապէս կամ «Վարձ» յիշեցէք, և կամ քիչ մը անդին Սարգիս Թաշեանը տեսնել ուզեցէք, իր կարգով կառքը բոստային մէջ, անկեղծ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կըրնէ անման յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ .

Զմոռնանք նաև կազմի վտարաններու և ֆոնօկրաֆներու նորոգութիւնը և նորերու հայթայթումը .

Պ. Թաշեան այս գիւրութիւնները բնծայելով, իր նմաններուն ծառայած ըլլալու գոնուակութիւնը պիտի ունենայ, և քիչ մ'այ գրում չահիլ պիտի ուզէ, իր պիտիութիւններուն դաստիարակութեանը յատկացնելու համար .

ԾԱՒՈՒ ԳԻՐՔԵՐ

«Արշալոյս» ի սպարանին մէջ, Շեքիֆ բաշայի պարտէզին գիմաց կը վաճառուին հետեւեալ պրոշիւրները .

Ա. ՊԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՄԻՒՆ ՄՍՏԵՆԱԳԻԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 անթիլ

« 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրոշիւրը թէև հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուելիքով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ ֆրանք .

Դիմել Արշալոյսի կամ քաղաքի թանգարանէն զատ Հեղինակին հասցէին օր է .

Mr. A. Balian

Le Caire

ՍԸՄՍԱՐ ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Նր հայրաւայրէ տուներ, որումսկան փոխաստորիակներ, կանաւորեալ սեղանակներ, հաշի, խանութի և կաշուածներու փոխակցման գործառնարիւնք .

Իր կեդրոնատեղին է Պալար Մուրուրի դրան քովի երկու օրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն 3ը կէս օրէ յետոյ .